

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

20.11.2018

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 20-ը.

#### ՕՐԱԿԱՐԳ

1. «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» և «Մանկավարժություն և հոգեբանություն» ամբիոնների վարիչների ընտրության հարցը: /Ձեկուցող՝ Կ. Պողոսյան/
2. Ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն: /Ձեկուցող՝ Կ. Պողոսյան/
3. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում: /Ձեկուցող՝ Վ. Աղաբաբյան/
4. «Մանկավարժություն» մասնագիտության «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի հայտի քննարկում: /Ձեկուցող՝ Կ. Պողոսյան/

#### ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա ներկայացրեց, որ սթ. հոկտեմբերի 10-ին ԵՊՀ հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կողմից հայտարարվել էր մրցույթ՝ ամբիոնի վարիչների պաշտոնակալման համար: Հումանիտար գիտությունների ֆակուլտետի երեք ամբիոններում առաջադրվել էր մեկական թեկնածու՝

- Բ.գ.թ., դոցենտ Վաչագան Վարազդատի Ավագյան - Հայոց լեզվի և գրականության ամբիոն,
- Բ.գ.թ., դոցենտ Քրիստինե Մուրադի Հարությունյան - Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն,
- Կ.գ.թ., դոցենտ Լևոն Կարոյի Սարգսյան - Մանկավարժության և հոգեբանության ամբիոն:

Հայոց պատմության և հասարակագիտության և Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոններում վարիչի թեկնածուներ չէին առաջադրվել:

Զեկուցողը ներկայացրեց ամբիոնի վարիչների թեկնածուների գիտամանկավարժական գործունեությունը մասնաճյուղում: Նա նշեց, որ երեք թեկնածուները համապատասխանում են ամբիոնի վարիչի պաշտոնին ներկայացվող պաշտոններին, սիրված են կոլեկտիվի կողմից, վայելում են ուսանողների հարգանքը:

Այնուհետև ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ Բ.Գ.Թ. Լ. Թումանյանը ընթերցեց թեկնածուների վերաբերյալ ամբիոնների նիստերի և մրցութային հանձնաժողովի կարծիքները (կարծիքը կցվում է):

Այնուհետև զեկուցողը ելույթի համար խոսք տրամադրեց ամբիոնի վարիչի թեկնածուներին:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի թեկնածու Բ.Գ.Թ., դոցենտ Վաչագան Վարազդատի Ավագյանը ներկայացրեց ամբիոնի հետագա գործունեության հետ կապված իր տեսլականը, հետագա անելիքների ծրագիրը: Նա նշեց, որ իր աշխատանքի կարևորագույն մասն է կազմելու ամբիոնի գիտական գործունեության խթանումը, ամբիոնի ներգրավվածությունը Մայր բուհի աշխատանքներում: Նա նաև ավելացրեց, որ իրենք շարունակելու են բուհ-դպրոց համագործակցությունը:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՅԻՆ.***

*Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, Ֆ.մ.գ.թ., դոցենտ Ս. Աթոյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, Գ. Էդիլյանը:*

Մասնաճյուղի գիտքարտուղար Ս. Աթոյանին հետաքրքրում էր, թե ինչ ներգրավվածություն է ունենալու ամբիոնը հանրապետությունում կազմակերպվող գիտական ծրագրերի մրցույթին և որքանով է ավելանալու ամբիոնի գիտական արդյունքը:

Զեկուցողը ներկայացրեց, որ ամբիոնը իր գոյության ողջ ընթացքում ակտիվորեն ծավալել է գիտական գործունեություն, որով պայմանավորված էլ ամբիոնի կազմում բոլորը գիտությունների թեկնածուներ են: ԲՈԿ-ի կողմից հրատարակվող գիտական հանդեսներում հաճախակի հրատարակում են գիտական և մեթոդական հոդվածներ: Ամբիոնի մի շարք դասախոսներ մենագրությունների հեղինակ են: Ամբիոնը օտար

լեզուների ամբիոնների հետ համատեղ նախատեսում է համաշխարհային արդի գրականության դեռևս չթարգմանված գործերի թարգմանություն:

Ամբիոնը կարևորում է նաև գիտամշակութային ակտիվ կյանքը: Կազմակերպվել և առաջիկայում ևս նախատեսվում են գիտաժողովներ, գիտական-գեղարվեստական միջոցառումներ, կլոբ սեղաններ և բանավեճեր:

Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչի թեկնածու Բ.Գ.Թ., դոցենտ Քրիստինե Մուրադի Հարությունյանը ներկայացրեց ամբիոնի հետագա գործունեության հետ կապված իր նկատառումները, հետագա անելիքների ծրագիրը:

Նա նշեց, որ ամբիոնը իր գոյության համեմատաբար կարճ ժամանակահատվածում մեծ թվով որակյալ շրջանավարտներ է տվել: Ջեկուցողը շեշտեց ամբիոնում տեղացի դասախոսներ ունենալու կարևորությունը: Նրանց բացակայության փաստը զեկուցողը պայմանավորեց մասնագիտության պահանջված լինելով և մայրաքաղաքում ավելի բարձր աշխատավարձով աշխատելու հնարավորությամբ:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

*Բ.Գ.Թ., դոցենտ Կ. Պողոսյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, Ֆ.մ.Գ.Թ., դոցենտ Ս. Աթոյանը, Կ.Գ.Թ., դոցենտ Լ. Սարգսյանը*

Վ. Աղաբաբյանին հետաքրքրում էր, թե դրսից հրավիրված դասախոսական կազմի պարագայում որքանով է արդյունավետ ընդմիջումներով և որոշակի օրերի ընթացքում մի քանի դասաժամ նույն առարկայի դասավանդումը:

Հարցին ի պատասխան զեկուցողը նշեց, որ տվյալ պահին այդ հարցի լուծման հետ կան որոշակի խնդիրներ: Նա հարցի լուծումը տեսնում է անվճար մագիստրատուրա գնացող ուսանողների հետ պայմանագիր կնքելով՝ հետագայում վերադառնալու և բուհում գիտամանկավարժական գործունեություն ծավալելու նպատակով:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի թեկնածու Կ.Գ.Թ., դոցենտ Լևոն Կարոյի Սարգսյանը ներկայացրեց ամբիոնի հետագա գործունեության հետ կապված իր տեսակետը, հետագա անելիքների ծրագիրը:

Նա նշեց, որ իր հետագա գործունեության առանցքում լինելու է՝

- կազմակերպել հանդիպումներ մարզի դպրոցներում՝ «Հոգեբանություն» կրթական ծրագրով ընդունելություն կազմակերպելու համար,
- ամբիոնի գիտական գործունեության խթանումը,
- հոգեբանության լաբորատորիայի հիմնումը,
- «Հոգեբանական պրոբլեմներ» անվանմամբ գիտական հոդվածների ժողովածուի հրատարակումը,
- որևէ կրթական ծրագրով մագիստրոսական ուսուցման կազմակերպումը,
- պրակտիկաների առավել արդյունավետ կազմակերպումը:

### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

*Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, Ֆ.մ.գ.թ., դոցենտ Մ. Աթոյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը:*

Այնուհետև ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներից ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

պ.գ.թ., դոցենտ Թինոյան Դավիթ – նախագահ

բ.գ.թ., ասիստենտ Այդինյան Անժելա – անդամ

Գասպարյան Շիրակ – անդամ

Կազմակերպվեց փակ գաղտնի քվեարկություն, որից հետո հաշվիչ հանձնաժողովը ամփոփեց արդյունքները և ներկայացրեց, որ քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 20-ը: Ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

բ.գ.թ., դոցենտ Վաչագան Վարազդատի Ավագյան – կողմ՝ 20, դեմ՝ 0, անվավեր՝ 0,

բ.գ.թ., դոցենտ Քրիստինե Մուրադի Հարությունյան – կողմ՝ 17, դեմ՝ 1, անվավեր՝ 2,

հ.գ.թ., դոցենտ Լևոն Կարոյի Սարգսյան – կողմ՝ 17, դեմ՝ 0, անվավեր՝ 3:

### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

- Հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:
- Արդյունքների հիման վրա՝
  - ա) Հայոց լեզվի և գրականության ամբիոնի ընտրված վարիչ Բ.գ.թ., դոցենտ Վաչագան Վարազդատի Ավագյանին ներկայացնել ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը,

բ) Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի ընտրված վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Քրիստինե Մուրադի Հարությունյանին ներկայացնել ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը,

- Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ընտրված վարիչ Կ.Գ.Թ., դոցենտ Լևոն Կարոյի Սարգսյանին ներկայացնել ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը:

### *ԼՄԵՑԻՆ.*

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ խոսեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը՝ ներկայացնելով կուրսային և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը: Նա նշեց, որ ֆակուլտետի դասախոսների կողմից ամբիոններ են ներկայացվել կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները, որոնք քննարկվել են ամբիոնների նիստերի ժամանակ: Հանձնարարվել են այն թեմաները, որոնք արդիական են, ունեն հետազոտության համար անհրաժեշտ համակազմ, առկա է տվյալ թեմային վերաբերող տեսական գրականություն: Ամբիոնների կողմից ներկայացվել են ղեկավարների խորհրդատվության օրերի գրաֆիկները, ինչպես նաև ամբիոններում ստեղծվել են ավարտական և կուրսային աշխատանքների ընթացքի մասին գրառումների մատյաններ: Ուսանողներին ժամանակին տրվել են անհրաժեշտ գրականության ցանկը, ներկայացվել աշխատանքի կառուցվածքը: Զեկուցողը նշեց նաև, որ որոշ ուսանողների մոտ ծագել են խնդիրներ և դժվարություններ, որոնք հնարավոր միջոցներով շտկվել և վերացվել են:

Պատմություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 17 ուսանող: Ուսանողների մեծ մասը ժամանակին հայթայթել է անհրաժեշտ գրականությունը, ճշտել աշխատանքի կառուցվածքը և այժմ շարադրանքի փուլում է: Կան ուսանողներ, որոնց աշխատանքի կատարման ընթացքը անբավարար է, նրանց հետ պետք է տարվի անհատական աշխատանք:

«Պատմություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի 7 և 3-րդ կուրսի 11 ուսանող տարվա ընթացքում գրելու է կուրսային աշխատանք: Աշխատանքները գտնվում են նախնական փուլում:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 15 ուսանող՝ «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաներից: Դեկանը

նշեց, որ թեև ուսանողները նկատելի ակտիվություն չեն դրսևորում նյութը շարադրելու և պարբերաբար ներկայացնելու հարցում, բայց աշխատում են և խորհրդակցում գիտական ղեկավարների հետ: Աշխատանքների մեծ մասը նախնական փուլում է: Առաջին կիսամյակում նշված կուրսը ունի նաև կուրսային աշխատանք:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի 14 ուսանողների կուրսային աշխատանքի թեմաներ են տրվել: Ձեկուցողը հավելեց, որ 2-րդ և 3-րդ կուրսերի կուրսային աշխատանքներն ընթացքի մեջ են, իսկ 4-րդ կուրսինը ավարտին են հասցվում: Նա հատկապես ընդգծեց 4-րդ կուրսի կուրսային աշխատանքների կատարման ընթացքի նկատմամբ հետևողականություն ցուցաբերելու հանգամանքը, քանզի ըստ ժամանակացույցի՝ այդ կուրսի աշխատանքների պաշտպանությունն առաջնահերթ է՝ նախատեսված հունվարին, մինչդեռ 2-րդ և 3-րդ կուրսերի աշխատանքների պաշտպանությունները տեղի են ունենալու տարեվերջին:

«Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի 11 ուսանող գրում է ավարտական, իսկ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 3-րդ կուրսի 39 ուսանող՝ կուրսային աշխատանք:

Ավարտական աշխատանքի թեմաները բավականին հաջող են ընտրված և արդիական են: Դրանք գերազանցապես ունեն էքսպերիմենտալ բնույթ: Ուսանողների մեծագույն մասը հասցրել է որոշակի չափով կատարել տեսական գրականության վերլուծություն և շարադրում: Ինչպես նաև կատարել են հետազոտական մեթոդների հավաքագրում, համակազմի ընտրություն, արդյունքների քանակական վերլուծություն: Այդ ամենը գտնվում է նախնական հետազոտման և վերլուծությունների շարադրման փուլում:

ՏՄՄ 3-րդ կուրսի 39 կուրսային աշխատանքների մեծ մասը (80-90%) պատրաստ է: Ուսանողները ղեկավարների հետ վերջին շտկումներն են կատարում: Ձեկուցողը կարևորեց կուրսային աշխատանքների կատարման ընթացքի նկատմամբ հետևողականություն ցուցաբերելու հանգամանքը, քանզի ըստ ժամանակացույցի՝ այդ կուրսի աշխատանքների պաշտպանությունն առաջնահերթ է՝ նախատեսված հունվարին:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի 26, իսկ «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի 5 ուսանող գրում է կուրսային և ավարտական աշխատանք:

Մասնագիտական լեզվից կուրսային աշխատանք է գրում «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի 19 ուսանող: Նշված մասնագիտությունների ուսանողները կատարել են ավարտական աշխատանքների 40, իսկ կուրսային աշխատանքների 80%-ը:

Մասնակի բացառություններով ավարտական աշխատանքների կատարման ընթացքը բավարար է: Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում ունենալ այն ուսանողներին, ովքեր դեռևս բավարար աշխատանք չեն կատարել, հանդիպել նրանց գիտական դեկավարներին, հարկ եղած դեպքում այս գործում ներգրավել նաև ամբիոնի այլ դասախոսների:

#### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

*Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., ասիստենտ Վ. Աղաբաբյանը, Կ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը:*

#### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

*Ամբիոնային հաշվետվությունները կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ համարել բավարար:*

#### ***ԼՄԵՑԻՆ.***

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի տեղակալ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2018-19 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները: Նա նշեց, որ քննաշրջանը կազմակերպված էր պատշաճ կերպով, քննություններն ու ստուգումները իրականացվել են ժամանակացույցի համաձայն: Առաջին անգամ ընթացիկ քննությունները անցկացվել են հատուկ կահավորված լսարաններում, որտեղ իրականացվել է տեսանկարահանում: Բանավոր քննությունների ընթացքը ձայնագրվել է: Այս ամենը հնարավորություն է տվել հնարավորինս կանխել գրագողության և արտագրությունների դեպքերը: Ֆակուլտետի դասախոսները

նկատելիորեն կատարելագործել են թեստերը: Ուսանողների կողմից հարցաշարերի հետ կապված խնդիրները լուծվել են ժամանակին, և տարաձայնություններ չեն եղել:

Ֆակուլտետում առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրված ակադեմիական պատկերը եղել է հետևյալը.

«Պատմություն» մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.21 և 7.37 միավոր (նախորդ ուստարում եղել է 2.90 և 6.45): «Պատմություն» մասնագիտությամբ ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է «Միջին դարերի պատմություն-1» առարկայից՝ 4.29, իսկ ամենացածրը՝ «Նոր պատմություն» առարկայից՝ 1.91: Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է «Ռուսաստանի պատմություն» առարկայից՝ 8.57, իսկ ամենացածրը՝ «Հայաստանի պատմական աշխարհագրություն» առարկայից՝ 3.00:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.36 և 6.36 միավոր (նախորդ ուստարում եղել է 3.78 և 7.41): Պետք է նշել, որ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է «19-20-րդ դդ արտասահմանյան գրականության պատմություն» առարկաներից՝ 4.07, իսկ ամենացածրը՝ «Նորագույն շրջանի հայ գրականություն առարկայից՝ 2.67:

Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է «Անտիկ և վերածննդի արտասահմանյան գրականության պատմություն» առարկայից՝ 8.90, իսկ ամենացածրը՝ «Հայոց լեզվի պատմություն» առարկայից՝ 4.53:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.96 և 7.56 միավոր (նախորդ ուստարում եղել է 3.15 և 6.78): Պետք է նշել, որ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է



«Տեխնոլոգիա և տարրական դպրոցում տեխնոլոգիայի ուսուցման մեթոդիկա» առարկայից՝ 4.67, իսկ ամենացածրը՝ «Մաթեմատիկա-B» առարկայից՝ 1.52:

Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է «Երաժշտություն և տարրական դպրոցում երաժշտության ուսուցում» առարկայից՝ 8.60, իսկ ամենացածրը՝ «Տարիքային անատոմիա և ֆիզոլոգիա» առարկայից՝ 4.59:

Հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսում ընթացիկ քննություններից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.90 և 8.06 միավոր: Ընթացիկ քննություններից ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է «Կոնֆլիկտի հոգեբանություն» առարկայից՝ 4.36, իսկ ամենացածրը՝ «Ստեղծագործական հոգեբանություն» առարկայից՝ 3.45 միավոր: Ընթացիկ ստուգումներից ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է «Հոգեբանական խորհրդատվություն» առարկայից՝ 9.00, իսկ ամենացածրը՝ «Հոգեբանության դասավանդման մեթոդիկա» առարկայից՝ 7.36 միավոր:

«Օտար լեզու և գրականություն» մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.19 և 7.48 միավոր (նախորդ ուստարում եղել է 3.17 և 6.83): Ընթացիկ քննության ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է «Ֆրանսերեն-1» առարկայից՝ 4.20: Ամենացածր միջին գնահատականը արձանագրվել է «Տեսական հնչյունաբանություն» առարկայից՝ 1.95:

Ընթացիկ ստուգումներից ամենաբարձր գնահատական արձանագրվել է «Լատիներեն» առարկայից՝ 10.0, իսկ ամենացածրը՝ «Օտար լեզվի պատմություն» առարկայից՝ 6.42:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.41 և 7.44 միավոր (նախորդ ուստարում 2.70 և 6.49): Ընթացիկ քննության ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է «Անգլերեն-7» առարկայից՝ 3.85: Ամենացածր միջին գնահատականը արձանագրվել է «2-րդ մասնագիտական օտար լեզու/ֆր./- 5» առարկայից՝ 2.96:

Ընթացիկ ստուգումներից ամենաբարձր գնահատական արձանագրվել է «Արտասահմանյան գրականություն-6» առարկայից՝ 8.52, իսկ ամենացածրը՝ «Տեսական քերականություն» առարկայից՝ 6.59:

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.90 և 8.65 միավոր (նախորդ ուստարում 2.68 և 6.63): Ընթացիկ քննության ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է «2-րդ մասնագիտական օտար լեզու /անգլ./» առարկայից՝ 4.00: Ամենացածր միջին գնահատականը՝ 3.80, արձանագրվել է «Ֆրանսերեն-7» առարկայից:

Ընթացիկ ստուգումներից ամենաբարձր գնահատական արձանագրվել է «Արտասահմանյան գրականություն-4» առարկայից՝ 9.20, իսկ ամենացածր 8.00 միավոր՝ «Ոճագիտություն» առարկայից:

2018-2019 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետի միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.19 և 7.48 միավոր (նախորդ ուստարում 3.17 և 6.83):

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

*Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., ասիստենտ Վ. Աղաբաբյանը, Կ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը:*

### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

*Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի 1-ին միջանկյալ քննությունների ընթացքը համարել բավարար:*

### ***ԼՄԵՑԻՆ.***

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ «Մանկավարժություն» մասնագիտության «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագիրն իրականացնելու համար ձևավորվել է աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

1. Անժելա Ժորայի Այդինյան -Բ.գ.թ., ասիստենտ

2. Մարատ Հովիկի Ձուրաբյան - ք.գ.թ., դոցենտ
3. Լուսինե Վիլիկի Թումանյան -ք.գ.թ., դոցենտ
4. Քրիստինե Մուրադի Հարությունյան-ք.գ.թ., դոցենտ
5. Լիաննա Գրիշայի Բեգինյան - պ.գ.թ., ասիստենտ
6. Աիդա Սերոժի Մարդանյան - ասիստենտ
7. Սվետլանա Զավենի Եղիազարյան - դասախոս
8. Ռուզան Հենրիկի Զարգարյան - դասախոս
9. Աստղիկ Վահանի Սիմոնյան –դասախոս
10. Անուշ Սերգոյի Օթարյան-գործավար

Աշխատանքային խումբը կրթական գործընթացների նպատակային կազմակերպման համար ուսումնասիրել է աշխատանքային շուկան, կատարել դրա վերլուծությունը:

#### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

Բ.գ.թ., ասիստենտ Ա. Այդինյանը ներկայացրեց մասնաճյուղում ներդրվող նոր կրթական ծրագրի մրցակցային դիրքը, խոսեց ծրագրի առանձնահատկությունների, կառուցվածքի և բովանդակության, վերջնարդյունքների, շրջանավարտների աշխատանքի հնարավորությունների մասին:

#### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

Հավանության արժանացնել ծրագրի հայտի ձևակերպումը և այն ներկայացնել ՄԿՈԱ բաժին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Կ. Պողոսյան  
Վ. Աղաբաբյան

*Կարծիք*

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի

Ուսումնասիրելով ամբիոնների կողմից ներկայացված կարծիքները և հիմք ընդունելով ԵՊՀ Իմ-ի գիտական խորհրդի 2016թ. մայիսի 27-ի նիստում հաստատված ԵՊՀ Իմ-ի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը՝ եկանք այն եզրահանգման, որ բոլոր թեկնածուներն էլ համապատասխանում են ներկայացված պահանջներին:

Ամբիոնի վարիչի թեկնածուները՝ Բ.Գ.Թ., դոցենտ Վաչագան Վարազդատի Ավագյանը, Խ.Գ.Թ., դոցենտ Լևոն Կարոյի Սարգսյանը և Բ.Գ.Թ., դոցենտ Քրիստինե Մուրադի Հարությունյանը, ունեն գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների հարուստ փորձ, ընդունված և հարգված են ամբիոնի աշխատակիցների և ուսանողների կողմից, ուստի երաշխավորում ենք նրանց մասնակցելու ամբիոնի վարիչի պաշտոնակալման համար հայտարարված մրցույթին:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի

գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ՝

\_\_\_\_\_

Հանձնաժողովի անդամներ՝

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

